

Zr. Andranik kë xsi / Zr.
Andranik

■ Antranik (1866-1927). Zr. Andranik kë xsi / Zr. Andranik. 1921.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

- La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

- La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

[CLIQUER ICI POUR ACCÉDER AUX TARIFS ET À LA LICENCE](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

- des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

- des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter utilisationcommerciale@bnf.fr.

3 8

ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ

ԿԸ ԽՕՍԻ



Հրատարակումիւն «Ապագայ» շաբաթաթերթի



1921

ԲԱՐԻՉ



47394725

ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ

Կ Ը Խ Օ Ս Ի



Հրատարակումին «Ապագայ» շաբաթաթերթի



1921

ԲԱՐԻՉ



Չհղալ

2008-155325



ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ

Կ Ը Խ Օ Ս Ի

Ա.

Կ. Պօլսոյ «Ճակատամարտ» թերթին 13 փետր. ի թիւին մէջ կարգացի իմ մասին գրուած յօդուած մը: Գրողը վարժապետ մըն է, որ զինւորական գործերու վրայ ալ կը ճանէ: Այդ յօդուածին պարունակութիւնը պարբերաբար յեղյեղուած է դաշնակցական մամուլէն, որ միամիտները մոլորեցնելու համար անձերը եւ դէպքերը կը ներկայացնէ խեղաթիւրուած կերպով: Ուրեմն ես չեմ գրեր իմ գրպարտիչներու համար, որոնք պատասխանի արժա-

նիչեն. բայց կը գրեմ պատմութեան համար, որ պիտի դատէ թէ՛ զիս եւ թէ անագնիւ հակառակորդներս:

Դաշնակցութիւնը միայն զիս չէ որ հալածած է: Ան հալածեց Եփրեմը, Սաքօն, բժշ. Աթապէկեանը, Շահումեանը եւ բոլոր անոնք, որ չենթարկուեցան իր քմահաճոյքին եւ գործիք չեղան իր ձեռքը: Դաշնակցութիւնը հալածեց մինչեւ Հայրիկը, Իգմիրլեանը, մինչեւ ներկայ Ամենայն Հայոց Ս. Հայրապետը, որ աթոռին վրայ այսօր կը մնայ հակառակ ամէն վտանգի եւ չի խորհիր փախչիլ շատերու նման:

Ինձ համար կ'ըսեն թէ «Դաշնակցութեան շփացած զաւակը» եղած եմ:

Բարեբախտաբար 1889 ին իմ յեղափոխական վարժապետս Դաշնակցութիւնը չէ եղած: Ան ժամանակուան յեղափոխական ուսուցիչներս, ուրախ եմ ըսելու որ, կ'ապրին այսօր:

Չեմ կրնար հասկնալ թէ կուսակցութիւն մը ո՞ր աստիճան իրաւունք ունի սեփականացնելու իր անցեալի

հետեւորդները, երբ ներկան բոլորովին կը հակասէ իր անցեալի քարոզած վարդապետութեանց ու ազգայնական ոգիին:

Ուրախալի կ'ըլլար հարկաւ որ Դաշնակցութիւնը ունեցած ըլլար յայտնի ու անյայտ հերոսներ, որոնց դաստիարակը իրեն պատկանող ինտէլեգէնտիան եղած ըլլար: Իմ այն բոլոր անզուգական ընկերներս, որոնք չկան այսօր եւ գորս Դաշնակցութիւնը կը կարծէ սնուցած ըլլալ իր ծոցին մէջ եւ որոնց անունով այս կուսակցութիւնը ուզած է միշտ հիւսել իր գործունէութեան դափնեպսակը, ինձ նման Դաշնակցութեան շփացած գաւակները պիտի համարուէ՞ին, անոնք ալ, եթէ միևնոյն պայմաններու տակ ստիպուած ըլլալին մեկուսանալ եւ քաշուիլ Եւրոպայի մէկ անկիւնը «Սալօններու նիստ ու կացին մէջ հանգիստ փնտռելու համար», ինչպէս կը սիրեն ըսել հակառակորդներս:

Տասնեակ տարիներ զիս ու ինձ նման զինւորները սնուցած են իրենց ծոցին մէջ Սասունցին, Մշեցին,

Ախլաթցիս ու առհասարակ հայ ժողովուրդը, որո՛ւն միայն զինւորներն էինք եւ ոչ թէ Դաշնակցութեան եւ կամ ոեւէ կուսակցութեան:

Հայ ժողովուրդի ծոցը մնած այս հարազատ զինւորները երբ կը կռուէին մայր երկրի վրայ ներկայ պայմաններէն հարիւր անգամ աւելի դժոխային պայմաններու տակ, Դաշնակցութիւնը իր արտասահմանի մամուլին մէջ կուսակցական պայքար կը մղէր, շահագործելով կռուող անգուգական ընկերներու անունները: Կարելի չէ հասկնալ ուրեմն թէ՛ մենք կուտղնե՞րս եղած ենք Դաշնակցութիւնը մնուցանողներն ու շփացնողները, թէ ան զմեզ:

Դաշնակցութիւնը այսօր հերոսաբար ինկողներու անունով խօսելու իրաւունքէն զուրկ է:

Ես չեմ կրնար երեւակայել թէ անհատ մը կրնայ ըլլալ ոեւէ կուսակցութեան սեփական ապրանքը, զոր ուզածին պէս կարենայ ծախել ուզած զինովը ու շահագործել զայն:

Բ.

Ես Դաշնակցութենէն քաշուած եմ 1907 թուականին: 1917ին «Հայաստան» թերթի մէջ հրատարակուածը երկրորդ հրատարականս էր:

1907 ին վիէննայի համաժողովին մէջ Դաշնակցութիւնը կ'ընդունէր կովկասեան նախագիծը, այսինքն կը հրատարէր իր բուն նպատակէն, որ էր թրքահայ ժողովուրդին ազատագրութիւնը, հետապընդելու համար համամարդկային նրպատակներ:

Ասիկա կը նշանակէր կիսով չափ թաղել թրքահայոց դատը:

Այն երեք օրուան ընթացքին, որ տեւեց կովկասեան նախագծի վիճաբանութիւնը, ամբողջ հոգիովս դէմ դրի: Մալումեան, համաժողովին մէջ օրուան նախագահը, բողոքեց, ըսելով թէ ես և հետս քանի մը հոգի պատճառ կը դառնանք ժողովին երկարաձգման:

Այն ատեն ես պատասխանեցի.

—Արիւն ձեր ի գլուխ ձեր: Ըրէ՛ք ինչ որ կ'ուզէք, բայց Ռուսիոյ դրոսերը մեզի դէմ մի' փակէք: Մենք շատ թշնամի ունինք արդէն, Ռուսիան

ալ թշնամի մի՛ ընէք մեզ, և պատճառ
մի՛ տաք որ կովկասի հայութիւնն
ալ թրքահայոց վիճակին ենթար-
կուի:

Նոյն համաժողովին երկարօրէն
վիճարանուած ուրիշ խնդիր մըն էր
Վասպուրականի մէջ գտնուող զէն-
քերն ու ռազմամթերքը: Իմ տաս-
նեակ տարիներու փորձառութիւնովս
համոզուած էի թէ այդ զէնքերը
թշնամիին ձեռքը պիտի անցնին:
Արամ Մանուկեան (բաշա) հակա-
ռակը կը պնդէր: Ինձ չլսեցին և
հաւանեցան Արամին, որ ոչ մէկ
փորձառութիւն չունէր: Չորս ամիս
ետք այդ զէնքերը անցան թշնամիին
ձեռքը և Արամ ձերակալուեցաւ իր
թագստոցին մէջ:

Այս լուրը աննելուս այլևս աւելորդ
համարեցի մնալ Դաշնակցութեան
մէջ և Վառնայէն հրաժարականս գը-
րելով ղրկեցի ժընէվ, որպէսզի հրա-
տարակուի «Դրօշակ»ի մէջ: Ժընէվի
«Բիւրօ»ն իր անդամներէն Սարգիս
Մինասեանը փութացուց քովս զիս
համոզելու համար: Թիֆլիսի «Արե-
ւելեան Բիւրօն» եւս կեղծ անունով
հեռագիր մը կուտար, որ չառնեմ

այսպիսի քալ մը:

Այս թուականէն սկսեալ Դաշնակցութեան ըրածները տեսնելով՝ ես աւելի ու աւելի ամրապնդուեցայ հրաժարականս առաջ բերող համոզումներուս մէջ:

Արդարեւ, անկէ ետք կը տեսնէի Դաշնակցութիւնը, որ իր բանը գործը կ'ընէր հալածել հայ «պուրժուաներ»ը, իբր թէ բանւորներու շահը պաշտպանելու համար գործադուլներ առաջ կը բերէր Պաքուի եւ Պաթումի մէջ: Այս գործադուլներէն տուժեցին միայն նաֆթային հաստատութեանց հայ գործատէրերը, որոնցմէ յաճախ դրամ մուրացած էր նոյն կուսակցութիւնը: Ասոնցմէ շատեր փակեցին իրենց գործարանները ի մեծ ուրախութիւն թաթար գործատէրերու: Տասնեակ հազարաւոր հայ գործաւորներ մնացին փողոցը եւ թափառեցան անգործ: «Օսմ. սահմանադրութենէն» ետք, Դաշնակցութիւնը իր գործադուլները տարածեց Պօլսոյ շրջականներէն մինչեւ Խարբերդի ու Սերաստիոյ գորգի գործատեղիները:

Դաշնակցութիւնը անկէ ի վեր հաւատարիմ մնաց իր ընկերվարական նպատակներուն: Երբ ունեցանք Անկախ Հայաստան, անոնք ընկրվարութիւն քարոզեցին Ղարապաղէն մինչեւ Սարը գամիշ հայ ժողովուրդին, որուն 80 տոկոսը այբուբէնը չէր գիտեր դեռ: Կ'ուզէին թուրքերու և թաթարներու ալ սորվեցնել ընկերվարութիւնը և իրենց օրկաններուն մէջ կը պօռային. «Ա՛շխատաւորներ, միացէ՛ք առանց ազգի խտրութեան:»

Երանի թէ Դաշնակցութիւնը այս «Միացէ՛ք» ի յորդորը կարդար հայ ժողովուրդին և փոխանակ 50 տարի ներքին կուսակցական կռիւ մղելու, միութիւն առաջ բերելու աշխատէր:

1907էն սկսեալ մինչև 1914 ապրած եմ վառնայէն մէկ ժամ հեռու կալաթա կոչուած գիւղը, ուր 120 տուն պուլկար և 10 տուն ալ թուրք կար: Վառնայի հայերը և նոյն իսկ պուլկարները կը վկայեն թէ ինչպէս ապրեցայ այս եօթը տարուան շրջանին:

Գ.

1908 ին թուրքերը կեղծ սահմանադրութիւն մը հռչակելով յաջողեցան խաբել Եւրոպան եւ որսալ յեղափոխականները:

Իբրեւ «խտէալիսթ յեղափոխական» հռչակուած մարդիկ աշխարհի չորս անկիւններէն թափուեցան Պօլիս, համբուրուեցան ոճրագործներու հետ, ընկեր դարձան անոնց, մոռնալով մեր հարիւր հազարաւոր զոհերը: Բեմերէն պոռացին թէ իրենք այլեւս «Օսմանցիներ» են:

«Սահմանադրութեան» հռչակման առաջին օրերուն տեսայ Մալումեանը (Ակնուէի), որ Պուլկարիա կը գտնուէր, Ռ. Զարդարեանը եւ Վահագնը, որ ետքէն կիլիկիոյ մէջ կախաղան հանուեցաւ: Շատ խընդրեցի իրենցմէ որ չերթան Պօլիս, ըսի թէ թուրքերը մեծ թակարդ մը կը լարեն զիրենք մէջը ձգելու համար: Զլսեցին ու գացին:

Անկէ ետք սկսաւ կռիւ մը թրրքական խորհրդարանի աթոռները խլելու համար: Քանի մը վարժա-

պետներ, որոնք ամիսը երկու ոսկի
առնելով պիտի գոհանային, ստա-
ցան 50 ոսկի ամսական: Թոքաթ-
լեանի, կամ կղզիներու մէջ կերու-
խումներ սարքուեցան «ընկեր» թա-
լէաթներու եւ «ընկեր» էնվէրներու
հետ, որոնց բացին ինչ գաղտնիք որ
ունէին:

Ատանայի ջարդէն մօտ 50 օր
առաջ կեղծ անցագրով մը Պօլիս
հանդիպեցայ, Ակնունի, Վարդգէս,
Զարդարեան եւ Դաշնակցութեան
շէֆերէն դեռ ուրիշներ ամբողջ
հինգ ժամ ուզեցին զիս համոզել թէ
ժէօն թիւրքերը ալլեւս թոյլ չեն
տար ոչ մէկ կոտորած: Ես հակա-
ռակը կը պնդէի եւ կ'ըսէի.

— Ձեմ հաւատար. այս գազան-
ները մեզ դարձեալ կը կոտորեն. ը-
րածնին դարձեալ կեղծիք է, դուք
կը խաբուիք եւ կը խաբէք մեր ժո-
ղովուրդը: Ինքնապաշտպանութեան
գաղափարը երբէք մի' լքանէք եւ
պատրաստեցէք ժողովուրդն ալ ալդ
ուղղութեամբ: Տիգրանակերտէն ըս-
կսելով մինչեւ Պարսից սահմանա-
զլուխը 160 հազար զինուած քիւրտ

կայ: Ժէօն-Թիւրքերը զինաթափ չեն
ըներ զանոնք եւ կը պահեն մեզ
յարմար առթիւ կոտորել տալու հա-
մար:

Մալումեան այն ատեն դարձաւ
ու ինձ ըսաւ.

— Ի՞նչ յոռետես մարդ ես դուն,
երբէք չտեսայ որ քիչ մըն ալ լա-
ւատես ըլլայիր:

Նոյն պահուն վարդգէս ինձ
կ'առաջարկէր որ ծանօթանամ Ալի
բաշայի հետ, որ այն միջոցին ոս-
տիկանութեան տնօրէնն էր Կ. Պօլ-
սոյ մէջ:

Հարցուցի փնտոեցի եւ հասկցայ
թէ՛ այս այն Ալի բաշան է, որ Սա-
սունի Տալուրիկի «Զբօսանք» թաղի
բնակչութիւնը կոտորել տուաւ եկե-
ղեցիին մէջ եւ յետոյ այրել տուաւ
զայն: Ալի բաշան ինձ դէմ կոռած
էր երեք անգամ: Հիմա կ'ուզէին որ
իմ ձեռքս դնեմ անոր արիւնոտ
ձեռքերուն մէջ եւ ըսեմ. «Երէկ կը-
ռիւ կ'ընէինք, այսօր ընկեր ըլլանք:»

Իմ սովորական զայրոյթովս պա-
տասխանեցի այս բոլորին եւ ըսի.

— Խերը տեսնաք. բայց գո՛նէ

ժողովուրդը մի' խաբէք:

Եւ «մնաք բարով» ըսելով մեկ-
նեցաւ Եգիպտոս:

45. օր չէր անցած, երբ իմացայ
թէ' Թալէաթ եւ իր նմանները կո-
տորել կուտան Ատանայի Հայու-
թիւնը:

Այն ատեն բուռն ոճով նամակ
մը գրեցի Ակնուհիին, ըսելով թէ ո՞վ
իրաւունք ունէր, ե՞ս իմ յոռետեսու-
թեամբս, թէ ինք' լաւատեսութեամ-
բը. «Լաւ գիտցէք որ, աւելցուցի,
երբ առիթը գտնեն ընկեր Թալէաթ-
ներ ձեզ ալ կոտորել պիտի տան:»

Այս տողերը գրելու ատենս եր-
բէք միտքէս չէի կրնար անցընել
թէ' Դաշնակցութիւնը նոյն միջո-
ցին Սելանիկի մէջ համաձայնու-
թիւն մը կը կնքէր Իթթիհատի հետ:

Անկէ ետք, ալլեւս Դաշնակցու-
թիւնը չափ ու սահման չը ճանչ-
ցաւ: Պայքարը սկսաւ Պատրիար-
քարանի իրաւունքներուն դէմ երես-
փոխանական ընտրութիւններու առ-
թիւ. եկեղեցիին ու կղերին դէմ
«բաց ու գոցի» վէճերով. հայ ըն-
տանեկան սրբութեան դէմ «Ազատ

սէր » քարոզելով. հայ տնտեսութեան դէմ, «պուրժուաները» հալածելով:

Դաշնակցութեան պերճախօս երեսփոխանները արդէն քրիստոնէից զինւորագրութիւնը ընդունել տալով ապացուցած էին թէ «հաւատարիմ օսմանցիներ» են:

Է. Պօլիսէն յարձակումի ազդանշան մը տրուեցաւ «Զարիզմ»ի դէմ: Դաշնակցական թերթերը կը պոռային. «Անկցի՛ Ռուսաստան, կեցցէ՛ ազատ եւ յեղափոխական թուրքիա»:

Անոնք չէին բաւականանար կըռիւ յայտարարելով Ռուսիոյ դէմ. կ'ուզէին տապալել պարսկական կառավարութիւնն ալ... 50 էն 100 զինւոր դրկելով Դաւրէժ ու թեհրան: Այս անմիտ ու աննպատակ կռիւներն ալ արգիլելու համար խօսեցայ շէֆերուն, բայց անօգուտ:

Եկաւ պալքանեան պատերազմը, որուն մասնակցեցայ առանց հարցընելու Դաշնակցութեան: Ես կռուեցայ իմ ցեղիս դարաւոր թշնամիին դէմ:

Ես մէկ իտէալ եւ մէկ նպատակ

ունէի. հարուածել մեր դարաւոր
թշնամին: Ասկէ դուրս ո՛րեւէ պե-
տութեան կամ կառավարութեան
դէմ շարժումի մը հակառակ մնացի
մինչեւ վերջ:

Իսկ Դաշնակցութիւնը փոխուե-
ցաւ հազար ուղղութեան: Օր մը
ռուսասէր էր, միւս օր ռուսատեաց,
օր մը թուրքերու թշնամին էր,
միւս օր անոնց բարեկամ. օր մը
անգլիասէր էր, միւս օր կը պոռար
«Անկցի Անգլիա». օր մը Պարսկաս-
տանի բարեկամն էր, միւս օր կը
կռուէր անոր դէմ:

Այս հանգամանքը միայն ցոյց
կուտայ թէ Դաշնակցութիւնը զուրկ
էր այն հեռատեսութենէն եւ իմաս-
տութենէն, զոր անպայման պէտք
է ունենայ ժողովուրդի մը ճակա-
տագրին հետ խաղացող ո՛րեւէ ան-
հատ կամ կազմակերպութիւն:

Ղեկը կորսնցուցած մարմին մը
ի՞նչպէս պիտի կրնար ղեկավարել
ազգ մը:

Ահա թէ ինչո՞ւ համար մեր ազգը
առաջնորդուեցաւ աղէտէ աղէտ-
եւ դժբախտութենէ դժբախտութիւն:

Դ.

Ընդհանուր պատերազմին սկիզբը անցայ կովկաս եւ մնացի ուսական բանակին կողքին մինչեւ 1917 ի յեղափոխութիւնը, որ ատեն Հայաստանի Ապահովութեան խորհուրդը թրքահայ զօրախումբ մը կազմակերպեց: Այս առթիւ ամբողջ երեք ամիս ինձ դէմ լարուեցան դաւադրութիւններ, եւ եղան հալածանքներ: Եւրոպացի զօրավար մը, գընդապետ մը, հիւպատոս մը եւ ուրիշ պաշտօնեայ մը օր մը զիս կանչելով ըսին հետեւեալը.

— Անդրանի'կ, շատ կը ցաւինք որ քու խաբիդ տակը կը փորեն եւ փուշեր կը թափեն, որպէսզի յաջողութիւն չունենաս:

Այս ըսելով տետրակ մը հանեցին իրենց գրպանէն եւ կարդացին զիս հալածողներուն անունները:

Թէ' յիշեալ Եւրոպացի անձնաւորութիւններուն եւ թէ տետրակի մէջ արձանագրուած հալածիչներուս

անուանները կը հրապարակեմ, երբ որ
յարմար ժամանակը գայ: (1)

Պատասխանելով հակառակորդ-
ներու ասն խօսքին թէ չկրցայ կա-
սեցնել թրքական արշաւանքը կա-
րինի առջեւ, ըսեմ որ կարին մըտ-
նելէս մինչեւ ելնելս տեւած է միայն
վեց օր: Այս ճակատին առջեւ, վաս-
պուրականէն մինչեւ Երզնկա եւ
Բաբերդ, կատարուած չարիքին պատ-
ճառները պէտք է փնտռել Թիֆլիզի
աղջկանց գիմնագիօնի մէջ կազմը-
ուած քօրբիւսի (գօրաբանակ) եւ
Ազգային Խորհուրդի մօտ: Այս քօր-
բիւսին կազմութեան համար ծախ-
սըւեցաւ տասը միլիոն ռուպլի:

Արդեօք կրնա՞ն ըսել թէ Քէրէ-
նըսկիի կառավարութեան վեցամսեայ
շրջանին մէջ 500 հազար ձայններ-
կայացնող? դաշնակցական կուսակ-
ցութիւնը կրցա՞ւ դրկել 5 հազար

(1) Զօրավարը կը յուսանք կը ներէ
մեզ անդադտնապահութիւն մը, եթէ
ըսենք որ այս հալածիչներուն գլուխը
կը գտնուէր Պ. Ահարոնեան: Ծ. Խ.

կամ 3 հազար հոգի դէպի ճակատ:

Սարրգամբը հասնելու ճակատի ընդհ. հրամանատար վրացի զօր. Օտիշիլիցէն ըսաւ ինձ. «Ես հազիւ ազատեցայ այդ ճախճախուտներէն, հիմա ալ դու ես որ պիտի իյնաս միեւնոյն ցեխերուն մէջ»: Թարգմանս էր բժիշկ Զավրիէֆ:

Թէ ինչպէս օգնած է ինձ դաշնակցական կառավարութիւնը Զանգեզուր գտնուած միջոցիս, այդ յայտնի կ'ըլլայ, երբ ըսեմ որ, այդտեղ գտնուած երեք գաւառներու հարիւր հազար բնակչութիւնը 50 հազար ըլլալի ծախսելով երեք անգամ պատգամաւոր ղրկած էր Թիֆլիս Ազգային Խորհուրդէն օգնութիւն պահանջելու եւ ամէն անգամուն ալ ձեռնունայն վերադարձած էր: Նոյնիսկ իմ բանակին պատկանող գումարը զոր ուղարկած էին ինձ վահան Փափագեան եւ Ա. Թէրզիպաշեան, Երեւանի կառավարութիւնը գրաւեց, որպէսզի քայքայուի զօրախումբս:

Էրզրումէն վերադարձիս Զօր. Նազարբէկեանի հրամանով գացած

էի Աղէքսանդրապօլի աջ թեւը, ուրկէ
Կիւլլի Պուչախ, Օրթաքիլիսէ, Քա-
զանճի: Այդ ժամանակ Պրէսթ-Լի-
թովսքի դաշնագրով Ախուրեան
(Արփա չալ) էր Հայաստանի սահ-
մանը: Զօրավար Նազարբէկեան հա-
մողուած էր որ թուրքերը Ախուր-
եանէ անդին չեն անցնիր, բայց օր
մը երեք ժամ տեւող կռիւէ վերջ
հայ կանոնաւոր զօրքը Աղէքսանդրա-
պօլը յանձնելով նահանջած էր Քա-
րաքիլիսէ եւ ինձ լուր չէր տրուած:

Իմ վրայ եկող թրքական զօրա-
մասի հետ 5 օր կռիւ ունեցայ, ա-
ռանց մեր զօրամասերէն ոչ մէկուն
հետ կապ ունենալու: Այս տեղէն 20
գիւղի հայ ժողովուրդը հետս առնե-
լով ուղղուեցայ Զալալ օղլու: Թրք-
ական զօրամասը կուգար ետեւէս
ու դեռ Զալալ օղլու չհասած եօթը
թաթար գիւղեր սկսած էին զար-
նել կոնակէս: Զալալ օղլու հասնե-
լուս ուզեցի անմիջապէս յարաբերու-
թեան մտնել Քարաքիլիսէի հետ հե-
ռաձայնով: Հեռաձայնի գլուխը ե-
կողն էր Նազարբէկեանի օգնական,
պատերազմական գօմիսէր դաշնակ-

ցական վարժապետ Մամասեան, որ
կ'իմացնէր ինձ թէ՛ վեց օրէ ի վեր
մեզմէ լուր չունին, միեւնոյն ատեն
կ'ըսէր ինձ. «Թրքական ուժերը Հա-
մաձուէն մեր վրայ պիտի յարձա-
կին, որով Քարաքիլիսէն թողլով
կ'երթաք Տիլիճան, վերջին յարաբե-
րութիւննիս է ձեզ հետ» ու հեռաձայ-
նը կտրուեցաւ: Ցերեկ եւ գիշեր
հեռագրով եւ հեռաձայնով գրագիրս
սպայ Շիմշիրեան վեց անգամ ու-
զած էր յարաբերութեան մտնել,
բայց ոչ մէկ պատասխան, որով
յայտնի կ'ըլլար որ առանց կռիւի
Քարաքիլիսէն թողած են մերիննե-
րը:

Ետեւէս եկող թրքական զօրա-
մասը հասաւ Չալալ օղլու: Չ'էի կրը-
նար 20,000 գաղթականութիւնը
թողլով իր բախտին՝ հեռանալ: Մէկ
ու կէս օր կռուելէ վերջն է՝ միայն
որ, գաղթականութիւնը բաւական
ճամբայ կտրեց դէպի Քալաքէրան
երկաթուղիի կայարանը, որով կրը-
ցայ մեկնիլ Քալաքէրան Տսեխ գիւղը,
ուր գտայ բանաստեղծ Յովհաննէս
Թումանեանը:

Եթէ թուրքերը յանդգնութիւն
ունենային դատարկ Քարաքիլիսէն
գալով Լոռիի կիրճը գրաւելու, ես իմ
զօրամասով ու ամբողջ գաղթական-
ներով պէտք էր գերի մնացած ըլ-
լայի:

Հինգ օր վերջ Քարաքիլիսէէն հե-
ռաձայնով իմացաւ Մամասեանէ թէ
վերադարձած են Քարաքիլիսէ ու ոչ
մէկ թուրք չէ մտած քաղաքը: Ե-
րեք ժամ վերջն ալ հրաման ստացաւ
Նազարբէկեանէ պահել երկաթուղիի
գիծը: Յետոյ հեռաձայնով կ'իմացնէր
ինձ Գօմիսէր Մամասեան թէ՛ հայ
զինուորները ոգեւորուած կը հալա-
ծեն թշնամին Քարաքիլիսէի երկա-
թուղիին ուղղութեամբ: Անմիջապէս
կ'իմացնեմ որ թշնամիի նահանջը
կեղծիք է, խորհուրդ կուտամ չա-
ռաջանալ կեդրոնով, ու երկու թե-
ւերը ամուր պահել միշտ, կեդրոնէն
չվախնալով բնաւ:

Առաջին օրուան չորս ժամ կռի-
ւէն վերջ, հետեւեալ առաւօտ կռիւը
կը վերսկսի եւ 3 ժամ յետոյ կ'իմա-
նամ թէ Քարաքիլիսէն յանձնած են
արդէն ու նահանջած դէպի Տիլիճան:

Նազարբէկեանի զօրամասէն դասալիք եղող 39 սպայ եւ մէկ քանի հարիւր զինուոր, որոնք կը փախչէին դէպի Թիֆլիս, Վրաստան, գիշերուան ժամը մէկին կը հանդիպին պահապաններու, որոնք փոխադարձ համազարկով կը կեցնեն այդ դասալիքները եւ առաւօտուն կը բարձրանան Տսեխ գիւղը իմ մօտս: Այս բոլոր անցուղարձերու կենդանի վկան են բանաստեղծ Յովհաննէս Թումանեան եւ շատ մը Լօռեցիներ:

Յովհ. Թումանեանի աջակցութեամբ նախ հաց կը տրուի այս քանի մը հարիւր հոգիին: Զօրավար կորկանեանի (Թնդանօթաձիգ), որուն քով կան չորս ուս սպաներ, կը հարցնեմ թէ ո՞ւր գնաց Նազարբէկեան.

— Տիլիճան, կը պատասխանէ.

— Իսկ ո՞ւր կերթաք,

— Թիֆլիս,

— Պարոններ, կ'ըսեմ, եթէ դուք Թիֆլիս երթալ ուզէք Պօրչալուի թաթարները բոլորդ ալ կը կոտորեն եւ զէնքերնուդ կը տիրանան.

— Ազնիւ խօսք կուտանք, պա՞

տասխանեցին ոռւերէն լեզով, որ վաղը կամ միւս օր կը հետեւինք քեզ եւ կողգանք:

Նազարպէկեանի եւ Լօռեցի քսան հոգիիներկայութեան պատսխանեցի:

— Դուք չէք հետեւիր ինձ, պիտի երթաք Թիֆլիս եւ կոտորել պիտի տաք այս սպաները եւ քանի մը հարիւր զինւորները:

Իսկապէս ալ անոնք գացին և կոտորուեցան: Ազատեցաւ միայն զօրավար կօրկանեան, չեմ գիտեր ինչպէս:

Հետս քսան հազար գաղթական ունենալով քալեցի երկու օրուան ճանապարհ, սարսափելի անձրեւ եւ կարկտախառն ձիւնի տակ, հասայ Տիլիճան, ուր տեսայ թէ ոչ ոք չկայ, բոլորն ալ փախած են: Գտայ Մեսրոպ եպիսկոպոսը հազարէ աւելի որբերով, որոնց մէջ կային մինչեւ 15 տարու աղջիկներ:

Փախչողները գետը թափած էին 12 գնդացի, 2 թնդանօթ, միլիոններով փամբուշտ եւ քանի մը հազար թնդանօթի ոռւմբ:

Կապել տալով թէլէֆօնի եւ հե-

ուագրի թելերը յարաբերութեան մը
տայ էլէնոֆֆայի եւ Երեւանի հետ:

Զինուորը դասաւորեցի դէպի
Գարաքիլիսէ, Տիլիճանէն 13 վերստ
հեռու: Զօր. Նազարբէկեան կը հե-
ուագրէր ինձ. «Ի սէր Աստուծոյ եւ
Ազգութեան, Տիլիճանը պահէ՛»։ Պա-
տասխանեցի թէ քանի մէկ հաստ
փամփուշտ ունիմ, Տիլիճանը չեմ
ձգեր:

Այն ատեն հաց չունէինք: Կե-
րածնիս ճարոնական քուքուրուզ
(եզիպտացորեն) եւ դարի էր:

Ե.

Այս միջոցին զօր. Կօրկանեան
կը գտնուէր Կարս: Պաթուժ վէհիպ
բաշայի մօտ էին Քաջազնունի, Խա-
տիսեան եւ Պապաշանեան, նաեւ
Օհանջանեան եւ սօցիալ դեմոկրատ-
ներէն Զօհրապեան եւ Բէկզատեան:
Հաշտութեան պայմանագրութիւնը
կը ղրկուի ինձ թուրք սպաներու
ձեռքով՝ նախ Կարսէն զօր. Կօր-
կանեանէն, երկրորդ՝ Գարաքիլիսէ-
էն վէհիպ բաշայի հրամանը. եր-
րորդ թիֆլիսի Ազգ. Խորհուրդէն
Աղստաֆայի ճամբով: Ասոնք կար-
դալէ վերջ կ'ուղարկեմ Երեւան՝ զօր.
Նազարբէկեանի:

Պ. Պապաշանեան ինձ պատմած
է թէ՛ հաշտութիւնը ստորագրուած
է Նազարբէկեանի կողմէ թիֆլիս
ղրկուած այն հեռագրին վրայ, որով
Զօրավարը կ'ըսէր թէ ոչ մէկ կռուող
զինուոր չունի:

Հաշտութեան պայմանագիրը
կարդալէս ետք Տիլիջանէն հեռագր-
րեցի Նազարբէկեանի հետեւեալը.

«Վեց հարիւր տարուան ստրկու-
թեան շղթան դարձեալ ձեր վիզն ու

ոտքը կ'անցընէք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմաններուն հանդուրժել, մոռնալով մեր երեսուն տարուան զոհերը եւ մէկ միլիոն նահատակները: Ստացէ՛ք ինձմէ Տիլիճանը, որպէսզի ես մեկնիմ ուր որ կ'ուզեմ:»

Այս հեռագրիս պատճէնները կալին Ս. Կաթողիկոսին եւ Երեւանի Ազգ. Խորհուրդին մօտ:

Ղրկուեցաւ գնդ. Պաղտասարեան, որ Տիլիճանը ստացաւ ինձմէ: Տիլիճանը եօթը օր պահելէս վերջ մեկնեցայ Սեւանայ լճին հիւսիսակողմը գտնուող Էլէնօֆքա գիւղը:

Հոն կազմ ու պատրաստ կեցող զօրամասիս բոլոր գալիք դժուարութիւնները եւ բազմակողմանի զոհողութիւնները բացատրեցի: Չինւորները մէկ հոգի եւ մէկ բերան պատասխանեցին ինձ.

«Մենք պիտի կռուինք մինչեւ մեր արեան վերջին կաթիլը, մեր նպատակին հասնելու համար:»

Միայն գրագիրս սպայ Շիմշիրեան ըսաւ թէ իր ընտանեկան պարագաները թոյլ չեն տար այլեւս ինձ

հետ գալու: Ուրախութեամբ տուի
անոր իրաւունքը եւ ճամբեցի:

Այս պարոնը 920 ի մայիսին Ա-
լէքսանդրապօլի պօլշեւիքեան շար-
ժումներուն ժամանակ ձերբակալ-
ուած եւ իր ատրճանակը վրան
ըլլալով՝ բանտարկուած է եւ իբր
թէ բանտին մէջ անձնասպան եղած
է, ինչպէս իմացայ ուրիշներէ:

Իմ հակառակորդներս շատ լաւ
գիտեն Նախիջեւան, Զուլֆա և Խոյ
երթալուս պատճառները: Չախողու-
թի՞ւն թէ յաջողութիւն ունեցայ,
ասոր ալ կը վկայեն ոչ միայն այսօր
Պաքուպա գտնուող յիսուն հազար
ասորի եւ քսան հազար հայ գաղ-
թական ժողովուրդը, այլ պարսիկ-
ները եւ նոյն ինքն թշնամիս Ալի
Իհսան բաշա: Զանգեզուրի, Ղափա-
նի, Սիսիանի ժողովուրդը, մինչեւ
10 տարու մանուկները գիտեն թէ
իմ զօրամասս օգո՞ւտ ունեցաւ թէ
մնաս:

Երբ Զանգեզուր կը գտնուէի դեռ,
ստացայ Պ. Խատիսեանէն նամակ
մը: Պատասխանելով՝ ըսի թէ իմ
դժգոհութիւնս դաշնակցական չ է -

Ֆերէն է, թէ՛ «Հայաստան» թերթի մէջ հրատարականս հրատարակուելէ վերջ թիֆլիսի ր ա ՚ օ նական ժողովը ոչ իսկ ազնուութիւնը ունեցաւ զիս հրաւիրելով դժգոհութիւններս լսելու. որովհետեւ ճիշտ այդ րայօնական ժողովը կազմողներն էին, որ կը հալածէին զիս. բացառութիւնները յարգելի են:

«Սիրելի Անդրանիկ, կ'ըսէր ինձ Պ. Խատիսեան իր այդ նամակին մէջ, իմ ցանկութիւնս է որ դուն հաշտուելի կառավարութեան հետ եւ ես կը լինէի միջնորդը»:

Իմ հաշտուելիս կամ ոչ, աւելցուցի իմ պատասխանագրիս մէջ, մեծ կարեւորութիւն մը չունի, մենք այսօր կանք, վաղը չկանք: Երբ Հայաստանի սահմանները զրծուին եւ պետութիւններէ ճանցուին, երբ մենք կ'ունենանք քօալիսիոնի կառավարութիւն, այն ժամանակ հայ ժողովուրդը երջանիկ կ'ըլլայ եւ եթէ քօալիսիոնի կառավարութիւնը յարմար տեսնէ ինձ գործ մը յանձնել, ես սիրով կը կատարեմ անոր հրամանը: Ի սէր Աստուծոյ ա՜նպէս ըրէք, որ լետագայ սերունդը ձեզ օրհնէ եւ ոչ թէ անիծէ:»

Զանգէզուրի մէջ գլխաւոր մտահոգութիւնս էր 30 հազարի հասնող

գաղթականութիւնը, որու ինչ աստիճան խնամք տանելս եւ փողոցներու մէջէն որբերը հաւաքելս տեսած է ամբողջ այդ շրջանի ժողովուրդը: Թող հակառակորդներս իրենք հաշիւը տան թրքահայաստանէն երկրորդ աստիճան 380 հազար գաղթականութեան, որուն կէս կոտորել տուին Իգտիրի, Էջմիածնի, Երեւանի եւ Աղէքսանդրապոլի պատերուն տակ եւ այս գաւառներու 200 հազար տունի հասնող ազգաբնակչութեան աչքին առջեւ: Ռուս պետութենէն շնորհիւ Պ. Պապաջանեանի ջանքերուն մօտ 50 միլիոն ռուպլի ստացան, այս դրամները բաշխուեցաւ զանազան բարեգործական հիմնարկութիւններու ձեռքով մեծ մասամբ տասնեակ հազար դասալիքներու, որոնք իբր պաշտօնեայ կը ծառայէին այդ հիմնարկութեանց մօտ: Այս դրամին հաշիւները չտուին, ծախսեցին առանց քօնթոլի: Ոչ ոք գիտէ թէ ո՞րքանը տրուեցաւ գաղթականին: Հակառակ ջանքերուս չկրցայ այս բարեգործական մարմիններու մէջ մտցնել թրքահայաստանի վեց նահանգներէն վեց ներկայացուցիչ, որպէսզի մսխումի եւ գեղծումի առաջքը առնուէր:

2.

Հակառակորդներս զիս կը մեղադրեն. էջմիածին ուխտի երթալով զէնքերս «Կաթողիկոս Զօրավարին յանձնած» և «Երևանի վրայ արշաւած» ըլլալուս համար:

Այո՛, ինձ համար էջմիածին ուխտատեղի մըն է և Ս. Կաթողիկոսն ալ՝ քսան զօրավարէն բարձր էր. այս պատճառով յարմար դատեցի անոր յանձնել զէնքերս:

Երբ էջմիածին կը գտնուէի, ձիաւորներ մուտ գիշերով մը լուր բերին ինձ թէ զինաթափ եղած մեր զինւորներէն եօթը հոգի սպաննուած են և թէ հրացանաձգութիւնը կը շարունակուի:

Նախապէս գրած էի Երևանի հրամանատար Շահխաթունիի, որ առանց իմ արտօնագրիս, զինւորներէս ոչ մէկուն թող չտայ Երևան մտնելու և հակառակ պարագային, ձերբակալէ զանոնք: Ասկէ ետք ըսկրսանք զինւորական ծառայութեան թուղթ տալ և ազատ արձակել զինւորները, որոնցմէ մօտ չորս հարիւր հոգի գացած էին Երևան: Ամերիկա-

ցի միսիոնար Տօքթ. Ըշըր խոստացած էր օգնել, հագուստ և սնունդ տալով անոնց:

Մեր այդ զինւորներէն մէկը Չանգուի կամուրջէն անցած ատեն հայ մավզէրիստ ոստիկան մը զինւորական թուղթը կը հարցնէ, յետոյ կ'ըսէ.

— Ատրճանակ ունի՞ս.

— Ոչ, կը պատասխանէ զինւորը:

— Վրադ պէտք է նայիմ:

Եւ ատրճանակ փնտռելու պատրուակով մավզէրիսթը կ'առնէ զինւորին քսակը և կը սկսի փախչիլ: Չինւորը կը վազէ անոր ետեւէն: Չինւորին ծանօթ եղող մը օգնութեան կը հասնի և կը բռնեն ոստիկանը: Նոյն պահուն վրայ կը հասնի հայ սպայ մը: Չինւորները յարգական բարեւ մը տալէ ետք կը պատմեն եղելութիւնը և դրամին տէրը կ'ըսէ դրամապանակին պարունակութիւնը: Հայ սպան փոխանակ քննելու և ճշդելու խնդիրը, կը փորձէ կերպով մը փախցնել գողը: Չինւորները կը բողոքեն: Ասոր վրայ սպան հայհոյելով ատրճանակ կը քաշէ ա-

նոնց դէմ: Ուրիշ զինւորներ կը հաս-
նին և կռիւ մըն է կը սկսի քարերով:

Զինւորական նախարարի օգնա-
կան Իրօ յիսուներակով մը կը հասնի
միջադէպին վայրը և կը հրամայէ
զարնել: Յիսուներակը, որ վանեցի-
ներէ կազմուած էր, կը պատասխա-
նէ. «Մենք մեր եղբայրներուն վրայ
կրակ չենք ըներ» և կը քաշուի: Իրօ
կ'երթայ և կը բերէ հարիւրեակ մը
ուրիշ զինւորներ, որոնք կը սկսին
համազարկի: Մեր զինւորները կը
յաջողին քարերով անոնցմէ ձեռք
անցընել երեք հրացան: Տօքթօր
Ըշրր անձամբ ներկայ եղած է այս
դէպքերուն: Պէօլիւք-Վէտիի հերոսը
կ'ուզէր իր քաջութեան ապացոյցը
տալ հայ զինւորներ կոտորել տալով:

Ահա այս լուրն էր, որ ինձ կը բե-
րէին ձիաւորները:

Անմիջապէս տեղւոյն վրայ գըտ-
նուող ոստիկան թէ զինւոր թիւով
հինգ հարիւր հոգին զինաթափ կ'ը-
նեմ, թէլէֆօնի գործիքները կը վեր-
ցընեմ, սպաները կը տանիմ սեն-
եակս և էջմիածինի մէջ կարգը պահ-
պանելու համար հարիւր ձիաւոր

Թողլով՝ կէս գիշերէն ետք կը մեկնիմ քովս գտնուող զօրամասով, որ պէսզի Երևան երթալով պահանջեմ զինւորներուս դիակները, վիրաւորները և բանտարկեալները:

Նոյն միջոցին Տիրայր Եպսկ. և ուրիշ եպիսկոպոս մը ինձմէ խնդրեցին, որ նախապէս իրենք երթան և հասկնան խնդիրը: Ըսի թէ Չանգուի կամուրջին գլուխը հասնելէս յետոյ ժամ մը միջոց կուտամ զինւորներուս դիակները, վիրաւորները և բանտարկեալները ինձ վերադարձրնելու համար: «Հակառակ պարագային, կ'ըսեմ, պատասխանատու չեմ այն կողմին համար, որ պիտի մըղուի քաղաքէն դուրս:»

Երբ կը մօտենամ Չանգուի ձորին, ինձ մօտ կուգան անգլիացի սպայ մը և սպայ Մարտիկ Պալեօգեան, որ անգլիացիներու մօտ կը ծառայէր: Ասոնք ալ ինձ կը խօստանան անմիջապէս ինձ բերել ըսպաննուած, վիրաւոր և բանտարկեալ զինւորներս: Կ'ըսեն նաև թէ քիչ մը ետք կը հասնինաև անգլիացի զօր. Տէվի: Կը հասնիմ կամուր-

Ղին գլուխը և կը սպասեմ ժամ մը:
Շատ չանցած կը բերեն ծունկէն վի-
րաւորուած զինւոր մը, զոր փոխա-
դրել կուտամ էջմիածին: Սպաննը-
ւածներուն դիակները կորսնցուցին,
ըսելով թէ սպաննուած չկայ:

Եկան Զօր. Տէվի եւ Շահխա-
թունի ու խոստովանեցան թէ այս
բանին մէջ յանցաւորը Դրօն է, խոս-
տացան պատժել յանցաւորները:

Եկաւ նաեւ բանտարկուած զին-
ւորներէն մէկը, որ միջամտած էր
կռուին: Այս զինւորը պատմեց թէ՛
ինչպէս իր դրամները, սուրը եւ ա-
տրրճանակը առած են նախապէս եւ
բանտ մտնելէ ետք ալ ոտքէն հա-
նած են կօշիկները եւ տարած: Կը
պահանջեմ այս զինւորին գոյքերը,
որոնք ետ կը վերադարձուին:

Էջմիածին հասնելէս առաջ՝ ար-
դէն մառազէրիսթները սպաննած էին
150 հոգի: Օր չէր անցած որ մարդ
մը սպաննուի կամ խեղդուի: Էջմի-
ածին ինձ մօտ եկան զիւղացիներ և
գանգատեցան թէ կառավարու-
թիւնը զիրենք թալլած է, ձեռքեր-
նէն առնելով բամպակը ոչինչ գինով

(փուլթ մը բամպակը 50 բուպլիի.
որ նոյն օրուան հաշուով կ'ընէր 2
Ֆր.: Մէկ փուլթը 40 ֆուլստ է եւ
կ'ընէ մօտաւորապէս 15 օխա):

Գիւղացիներուն տուած տեղե-
կութեան նայելով այս գրաւուած
բամպակները մօտ 300 հազար անգլ.
ոսկի արժէքով էին: Այս բամպակ-
ներն է, որ Պ. Ահարոնեան ուզեց
ծախել Լիվրբուլի կամ Մանչէսթրի
մէջ, բայց ելեւմտական նախարար
Սարգիս Արարատեան անկէ աւելի
ճարպիկ ելնելով ծախած է Պաթու-
մի մէջ, ինք ստանալով քովիսիօնը:

Ես պատասխանեցի բողոքող գիւ-
ղացիներուն թէ ո'եւէ կապ չունիմ
Երեւանի կառավարութեան հետ եւ
կրնան երթալ ու աղերսագիր մը տալ
ներքին գործերու նախարարին ի-
րենց բամպակի խնդրին համար: Գիւ-
ղացիները ըսին թէ արդէն դիմած են
եւ արդիւնք մը չեն կրցած ստա-
նալ:

է.

Ես հեռացայ Հանրապետութեանէն, որպէսզի մասնակից չլինիմ այն բոլոր անպատուաբեր, անմիտ, սընանկ եւ ազգակործան գործունէութեան, որուն նուիրուեցան հանրապետութեան վարիչները առաջին օրէն:

Իւրաքանչիւր զինւորականի քով դաշնակցական լրտես մը դրուեցաւ:

Խորհրդարան մը կազմուեցաւ զուտ դաշնակցականներէ, որոնց մէջ կային քանի մը ընկերուհիներ ալ:

Ներքին պայքար մղուեցաւ միւս հայ կուսակցութեանց դէմ երկրին մէջ թէ երկրէն դուրս: Իսկ հայ պօլշեւիքներուն դէմ յայտարարեցին եղբայրասպան կոիւ:

Պատերազմ ըրին Վրաստանի դէմ երեք հոգիի որոշումով եւ Հայաստան մատնուեցաւ սովի:

Շքախումբեր կը ղրկուէին Տրապիզոն եւ Կ. Պօլիս, ոճրագործ էնվէրներու եւ թալէաթներու մօտ:

Թիֆլիսի մէջ երեք ամիս կը վիճէին թէ մեր բանակը պէտք է կազ-

մել տէմոքրաթիկ սկզբունքներով-
ինչ որ կը նշանակէր տիսիբլինը
վերցնել:

Չինադադարէն ետք հանրապե-
տութեան վարիչները ցոյց չտուին
իմաստութեան ո՛րեւէ նշույլ:

Պաշտօնատուները լեցուեցան
դաշնակցական պաշտօնէութեամբ,
որոնց թիւը կը հասնէր 16 հազարի:
Ճակատ դրկուեցան Դաշնակցու-
թեան չպատկանող եւ հակառակորդ
տարրեր միայն:

Պ. Խատիսեան Պաթումի դաշնա-
գիրը ստորագրելէն ետք Թիֆլիսի
մէջ կը յայտարարէր թէ Թուրքերը
զարգացած եւ ճէն թլմէն մար-
դիկ են եւ Թուրքիոյ հայերը չեն
կրցած անոնց հետ վարուելակերպ
ունենալ:

Երեւանի մէջ կը հագուեցնէին
մեր սիրուն աղջիկները, որպէսզի
կայարանի մէջ ծաղկեփունջերով
դիմաւորեն Խալիլ եւ Նուրի փաշա-
ները, որոնք հարիւր հազարաւոր
հայուհիներ բռնաբարել եւ կոտո-
րել տուած էին: Երեւանի մէջ զին-
ւորական նուազախումբերով ճաշ-
կերոյթներ կը տրուէր այս մարդոց:

Չկրցան հետեւիլ շրջահայեաց
ներքին քաղաքականութեան մը եւ
առաջ բերին ապստամբութիւններ
թաթարական շրջաններու մէջ:

Մերժուեցան Ազգ. Պատուիրա-
կութեան առաջարկները համաձայ-
նութեան մասին:

Այս բոլորը արդիւնք էին մտայ-
նութեան մը, որ չէր զանազանուեր
Ռուսիոյ արդի վարիչներուն մտայ-
նութենէն:

Ես կը նախատեսէի թէ բոլոր այն
աթոռները, զոր գրաւած էին Երե-
ւանի ղեկավարները, խարխուլ էին,
քանի Ռուսաստան իր վերջին խօս-
քը չէր ըսած:

Դժբախտաբար այսօր իրական-
նութիւն մըն է, ինչ որ նախատե-
սած էի:

Այն մարդիկ որոնք կը հիանային
թուրքերու ճէնթլմէնութեան վրայ,
ստորագրեցին Աղէքսանդրապօլի
դաշնագիրը, ցեխի մէջ թաթխելով
այն ոսկէ գրիչը, որով ստորագրու-
ած էր Սէվրի դաշնագիրը:

Անցեալ տարի երբ Ամերիկա կը
գտնուէի, Գ. Փաստրմաճեան աղմուկ

մը փրցուց, ըսելով թէ Պօղոս Նու-
պար Հայաստանի հարաւային մասը
քիւրտերուն կը յանձնէ:

Սակայն չլսեցի տակաւին թէ
ի՞նչ կը խորհի միեւնոյն Փաստըր-
մաճեանը եւ ինչո՞ւ շշուկ մը իսկ
չի հաներ ամբողջ Թրքահայաստանը
մեր թշնամիներուն ծախողներուն
դէմ:

Հայկ. Հանրապետութիւնը վիժե-
ցաւ, որովհետեւ շէնք մը շինելու
համար լաւ ճարտարապետներ պէտք
էին. մինչդեռ անոր ղեկավարները
հիմը դրին օդին մէջ, փոխանակ
հաստատուն գետնին վրայ դնելու:

Ուրիշին հոր փորողները իրենք
մէջը ինկան:

Իմ խիղճս եւ հոգիս հանդարտ է
այս բոլորին մէջ:

Մնացածը կը թողում անաչառ
պատմազրին, որպէսզի երեւան հա-
նէ բոլոր անոնք, որոնք պատճառ
եղան այսքան անմեղ արիւններուն
թափուելուն:

ԱՆԴՐԱՆԻԿ

(Վերջ)



ԳԻՆ՝ 2 ՖՐԱՆՔ

Տպարան « Ա Պ Ա Գ Ա Ց »

83, Rue de la Santé, PARIS (XIII^e)